

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12... Գր...
Վեցամսեայ 6... Գր...

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան... 14 Գր...


Վեցամսեայ... 7 Գր...

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօղար
Վեցամսեայ 1.50 Գր...

4 ԱՆԵՐԻԿ

Մանուշակ և Բոլոր
20 ամսիկով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻ ԱՄՆԱ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

Иравуник

ВАРНА

Գրութիւնք եւ չին
տրուիր

ԱՆՍԻՍՐԱՆՈՒԹԵԱՆ

ՈԳԻՆ

Մեր նախորդ թիւով ԳՐՈՇԱՆԻ էն
արտատպեցինք Հ. Յ. Գաշնակ-
ցութեան Գ. Բնդ-Տ. Ժողովին ու-
րոշումներէ մինն, որով այդ կու-
սակցութիւնը իսպառ «կը մեր-
թէ Հնչակեան երկու հատուած-
ներուն հետ միութիւն կամ
համերաշխութիւն կնքելու հա-
մար ու է քայլ ընել» և ասով
հրապարակաւ իր բացասական
պատասխանը տուած կ'ըլլայ
Միութեան կողմակերպու-
թեան Գոնդիւրի հրաւերին: «Մի-
ութիւն կամ համերաշխութիւն
կնքելու համար ու է քայլ ըն-
ել»:

Հ. Յ. Գաշնակցութիւնը իր այս
հակամիութենական որոշումին
պատճառ ցոյց կուտայ քանի մը
նկատումներ: Մենք հաս պիտի
շանտաք քննել թէ այդ նկա-
տումները որ աստիճան բանաւոր
են:

«Անյեակ բանակցութիւններու
անյաջող փորձերը» կը յիշե-
բայց այդ բանակցութիւնները
անյաջողութեան դատապարտելու
զլիաւոր պատճառը Գաշնակցու-
թիւնը ինք եղած լինելուն նոյն
իսկ բանապայմաններով և դէպքե-
րով հաստատուած ըլլալը շարե-
րու համար գաղանիք չէ կը կար-
ծենք:

Նախ վեր. Հնչակեաններու և
Գաշնակցութեան միջև միութեան
բանակցութեան համար Արիւստի
և երկու գործիչներու գործէ
քաջաւիլը պահալն Գաշնակ-
ցութիւնը բանապայման 8 ծան-
կիւնեանի միջոցաւ: Շատ դժուա-
րութիւններէ յետոյ այս պա-
հանջին գոհացում տրուած եղաւ
այդ մարդոց քաջաւիլովը: Բայց
Գաշնակցականները կրկին իրենց
տեղը գտնուած մնացին:

Յետոյ չէզոք Միութեան մը և
լաւ միութեան միջնորդ ըլլալու:
վեր. Հնչ. նոր վարչութիւնը, մի-
ութեան սիրոյն համար, խնդրեց
Գաշնակցութեանն որ կամ ուղ-
ղակի իր հետ բանակցութեան

մտնէ և կամ իր կողմէ պաշտո-
նապէս բանապայման պաշտոն
տալ Միութեանն, որպէս զի ասոր
հետ կարենան բանակցել:

Գաշնակցութիւնը ոչ մին ըրաւ
ոչ միւսը, այլ իր օրկաններով
բաւն կերպով հարուածել և
անուանարկել ջանաց թէ Հնչ.
կուսակցութիւնը և թէ ասոր
նոր վարչութեան անդամները:
Այս գէպով յայտնուեցաւ թէ
գաշնակցութիւնը միանալու եր-
բէք տրամադիր չէր:

վերակ. Հնչակեան կուսակցու-
թիւնը վերջին ճիգ մըն ալ ը-
րաւ և յայտարարեց թէ ինք
Միութեան համար պատրաստ է
ամեն զոհողութիւն յանձն առնե-
լու, և հրաւիրեց գաշնակցա-
կանները որ բանակցութեան
մտնեն ուղղակի կեդրոնին հետ:
Երկար տատանումներէ յետոյ,
վերջապէս մէկ կողմէն ալ ժո-
ղովուրդին ստիպումներէն մղուե-
լով, Գաշնակցութիւնը հարկա-
դրուեցաւ սկզբունքով ընդունել
վերկ. Հնչակ. կուսակցութեան
հետ միանալու առաջարկը, ու
կառ. նախնական պայմաննե-
րուն համար գրութիւններ փո-
խանակել: Այս միջոցին վրայ
հասաւ Հնչակ. երկու հատուած-
ներու միացումը: Բայց գաշնակ-
ցականները չը գաղթեցան մէկ
կողմէն միութեան խնդիրը մը-
շակել ձեռքն իր, միւս կողմէ
իրենց երկրորդական օրկաննե-
րով Միացեալ Հնչակեան եր-
կու հատուածներուն միջև երկ-
պառակութեան նոր որոնք ցա-
նելէ: այս սգեղ իրողութեան
վկայ կը բաւեն իրենց Հայրենիք
թերթի այն ժամանակուան թիւե-
րը իսկ, առանց յիշելու բերանէ
բերան տարածուող քսութիւննե-
րը ու յայտնի չկամութիւնները:
Եւ գործը եկաւ հոն հասաւ որ Հին
Հնչակեանները՝ թիկունք գտած
գաշնակցականներէ՝ իրենց փայ-
փայած ընկերավարութիւնը փո-
կելու մասհողութեամբ դաւեն
Միութեան և վերջին պառակ-
տումը առաջ բերեն: Իսկ Գաշ-
նակցութիւնը փոխանակ քայլ
կուսակցութեան մը կեդրոնին

պառակտումը բռնել աշխատե-
լու, ջանաց իր օրկաններով և
գործիչներով այդ պառակտումի
թոյնը հնչակ. կուսակցութեան
միջև մանրակերպերը հասցնել
հակառակ ջիգձեաններու և
խուշաղեւաններու միութեան
պահպանումին համար թափած
ճիգերուն: և որպէսզի այս յար-
գուած և անձնուէր գործիչներու
այդ ճիգերը ապարդիւն մնան,
Գաշնակցականները չը խղճահա-
րեցան թէ՛ զանոնք անուանա-
րկելու և թէ Ռուբէն Կարապետ-
եաններու և Սապահգիւլեաննե-
րու պառակտիչ գործունէութեան
թիւ թիկունք հանդիսաւ ալու,
անոնց յանցաւոր և ոճրագործ
ողորումները հովանաւորելու:
Ասոնք այնչափ թարմ իրողու-
թիւններ են որ դեռ չեն մոռ-
ցուած և որոնք արդէն ցոյց կու-
տան Գաշնակցականներու Միութե-
թիւնը չը կամենալը:

Գաշնակցութեան Գ. Բնդ-Տ.
Ժողովը չը միանալու պատճառ
ցոյց կուտայ նաեւ Հնչակ. երկու
հատուածներու «այն դատապար-
տելի ոգին», որ արմատացած է
եղբ. այդ հատուածներու մէջ
թէ յեղափ. ընդհանուր տեսա-
կէտով և թէ մասնատարապէս
Գաշնակցութեան նկատմամբ:

Ո՞ր ոգին է այդ: Եթէ իրօք
այդպէս դատապարտելի ոգի մը
կար, ի՞նչու աւելի առաջ չը
յայտնեցին եւ Հնչակեաններու
հետ միացումը սկզբունքով ըն-
դունեցին: Եթէ այդպիսի դա-
տապարտելի ոգի մը չգտացած էին
պէտք էր անձնուէր խնդիր հա-
նելէ, Միութեան և այլնի բա-
նակցութեան խօսքերը հրատա-
րակելէ առաջ այդ ոգին հան-
րութեան ցուցադրել: Բայց մեզ
ինչպէս փաստերը ցոյց կուտան
Միութեան արգելք եղող «դա-
տապարտելի ոգի մը» եթէ կայ
մեր յեղափոխական կողմակեր-
պութեանց մէջ, այն անմիա-
բանութեան ոգին է: զոր պէտք
է մաս մը գաշնակցական վարիչ-
ներու մէջ փնտռել:



ՄՈՒՇ ԵՒ ՍԱՍՈՒՆ

Պուրկարական հեռագր. գոր-
ծակարգի մէջ «Իրաւունք»-ի հարդ-
րութիւնը հետեւեալ հեռագիրները
նշանակաւոր կը հրատարակենք:

Կ Պօլիս 6 յունիս

Իրազեկ դիւանագիտական շըր-
ջանակները կարծիք կը յայտնեն
թէ ամսոյ 2 թուականով հա-
ղորդուած մանրամասնութիւննե-
րը Մուշի ստանձագի կացութեան
մասին պէտք է ճշգիւ տուողուն
հոն գտնուող ռուսական անդղի-
ական և փրանսական հիւպատո-
սներուն անձնական հարցաքննու-
թիւններովը:

Կացութեան անապահովութիւնը
ու ծանրութիւնը խիստ շատ կը
չափազանցուի հայերու և հայա-
սէրներու կողմանէ: Ասոր բնա-
տարակոյս չկայ: Շատ մը նշան-
ներ կան որ իրաւունք կուտան
ենթադրելու թէ հայկական
մասնախումբը (գօմիթէ) կապակ-
ցութեան մտած է մակեդոնականի
հետ, միատեղ գործողութեան
մը մասին:

Թուրքերու կողմէ կը խոստո-
վանին ինչ ինչ մասնաւոր բռնու-
թիւններ գործուած ըլլալը:
սակայն սովորաբար կըսեն թէ
այս բռնութիւններուն տեղի
տուին հայ յեղափոխականներու
չարժանքները և հայ հրոսա-
խումբերու կողմանէ գործուած
անգլութիւնները:

Կարելի չեղաւ բնաւ զօպել այս
բանէն կատարած քննութիւնը, որոնք
ոտքի ելան և կրկնապատիկ վրէժ
լուծեցին Հարբէն: Քիչ ժամա-
նակ առաջ երեք գեղականներուն
կողմանէ եղած դիմումներուն վը-
րայ վերջերս ամենախիստ հը-
րամ ններ տրուեցան Հայաստա-
նի իշխանութեանց, այնպէս որ
հիմա անգործութիւն ու կարգ
կը տիրէ սպառնալից գաւառնե-
րուն մէջ:

ԹԱՆ և արտասպառած

Պօլիս 15 յունիս

Հիւպատոսական վերջին տեղե-
կագիրները Սասնոյ վերջի գէպ-

քերական մէջ Բիւրոսի բէ և Թիւր-
քերէ կատարածներուն թիւը
3500 կը համարեն :

Իսուր միշտ կը պնդէ թէ
Բիւրոսերը և զինուորները յան-
ցաւոր չեն և բոլոր յանցանքը
յեղափոխականներուն կը վերա-
գրէ :

Նոր գիմուսներ պիտի բլլան,
անվնաս Հայերուն վրայ բռնու-
թիւնները արգիւիւտ համար :

ԱՆ ՀԵՐԻՔԷ

Յունական թերթերը՝ Ստոնոյ չըջա-
նին ծանր վիճակը հետզհետէ հաղոր-
գելէ վերջ, այժմ ալ «Ենոստոս» թերթը
25 մայիս թուագրեալ պաշտական հե-
ռագրով մը կը ծանուցանէ որ «անգը-
լիական, գաղիական և ուսական
շեքիկայացուցիչները կը հաստատեն թէ՛
Սասնայ մէջ այր, կիւնեւ մանկութեւ 5000
հայեր թիւը քանակաւ չեն ուտակ
հետը-կտոր եղած են և Սասնայ, այս
վերջի աղետքին բուն պատճառը քա-
ջալի Անգլիանիկին 80-100 հոգիով
հոն երեւնալը կը նկատեն որ շատ սը-
խալ է և սխալ է ալ բացարձակապէս
թիւրքին հին միտք մնալուն վերաբը-
րել : Միջ որ թիւքը իր բոլոր վայրագ
կողմերով կը ճանչնայ, և ո՛վ որ
2-3 տարիներէ ի վեր ի գործ դրուած
գրօշակեան խաբէական պոռտախոտու-
թիւններուն հետեւած է մեղի հետ հա-
մակարծիք է որ, այս շարքին բուն
պատասխանատուն բազմաթիւներէն
է որ գրօշակեան վարչները բազմա-
կողմանի ձեւերով իրենց վրայ մար-
մնացուցած են :

Թուս-ճարտարական պատերազմը քա-
նի ամիսներէ ի վեր սկսած ըլլալով
հանցիւր, անգղիական թիւրքերը կը
գրեն որ տակաւին ճարտար պատե-
րազմական յատակապիւծը յայտնուած
չէ : մէկ կողմէն արդէն իսկ պատե-
րազմը դաշտին մէջ դանուող կազմա-
կերպով կառավարութիւններ իրենց
ծրագրերուը գաղտնի պահել անհամար
կը նկատեն, միւս կողմէն մեր յեղա-
փոխական անուան տակ կը կառող
հո-
րափոխականները՝ միմայիս քոյր կու-
սակցութեանց հետ մըցած ըլլալու և
ժողովուրդին ուշադրութիւնը իրենց
գարծնելով անարժանաբար յափշտակ-
ուած վարչական փոխները աւելաւոր
պահելու համար՝ եղածը, չեղածը և
մտքէ անցուած անպարելին իսկ, բե-
մերու վրայէն և թիւրքերու միջոցաւ
հրապարակային անխիղճ և ամենա-
հասարակ մատուցելու համար կը
մեր Իսթանբուլը ուշադրութիւնը կը
բաւարարեն երկրին այս և այն մասին,
և ոչ մէկ քանի տեղեակ մեր եղբայր-
ները բարեբաղտական խժոճութիւնե-
րու կենթարկեն : Մէկը Ամերիկայ կը
կանչուրաւ « յառաջիկայ դարնաւ
Սասուն պիտի ապստամբի 4000 ից ա-
ւելի զինուածներով » միւսը Իսթ-Ար-
մենիայի լուրեր կը հաղորդէ « վտան-
գի ժամանակ Սասունէն և այլ տեղե-
րէն ֆէյդայիները օգնութեան պիտի
հասնին », ուրիշ մը աստ ու անդ
« պարսկական հողին վրայ փոքր բաց
մի ուսեղ թագաւորութեան աւելաւոր-
ներ կուտայ » . . . Հապա՞ հաւատար-
եալ հետեւորդները ամեն տեղ, ամեն
անկուն ասանց ալ ու ձախ նայելու
կը կուրին, կը վիճաբանին և իրազէկ
թիւրահաւատները հայ իսկ չեն նկատեր,
« ինչ կըսեն ճանրմ գաշնակցութիւ-
նը մեծ ուժ ունի, քիչ ժամանակէն

Սասունը պիտի ապստամբեն », սահ-
մանազուրկներէն անպարտելի խուճեր
պիտի անցնեն », Բայց թէ՛ այս պոռ-
տախոտութիւններուն կը յաջորդէ եղբ-
թիւրք հրապատմներու կարգադրու-
թեամբ-պարսկական սօցթաներուն
հայերուն դէմ գրգռուել, սահմանա-
գրութիւններու ամրացումը և Սասնայ
ու այլ տեղերու անգիմադիր անդէն-
անպաշտան կոտորումը, որո՞ւ հոգ,
Բանի մը տարիներ լուծիւն կը պա-
հեն և երբ արտասահմանի հայու-
թիւնը քիչ քիչ քիչ քիչ կը կարծե-
նալ միեւնոյն ազգապահանաւոր, գոր-
ծելակերպին Պիտի թիւքին սակաւ
որ մասի վրայ հարուող քանի մը
մարդիկ այսքան անխոյանի վտա-
թեան ապացոյցներ չայլելէն յետոյ
կրկին շարունակեն իրենց սխիւթ
չահատակութիւնները : և պիտի թո-
ղունք որ « Հայաստան տառնց հայու »
Թուսոյ յառաջիկայացուցութիւնը դեռ
նայ ըստ Լուսնակեան ծրագրի Մէջ ոչ
ալ ժամանակն է որ գաշնակցական
հետեւորդները ուշադր գալով անողո-
քարար մարտագործին իրենց վարչա-
կան շարքերը պատակաւ-կառնուելի-
ներէ և Սղգին բաղձացած, պահան-
ջած միտքիւնը դիւրացնելով, մէկ
նպատակի համար, մէկ դրօշի տակ
օգտակար շարքում մը պատրաստուե-
լու ատիւն տան : Հակառակ պարս-
կային միտք արտասահմանի հայերս
պարտաւորեալ ենք ասանց կուսակ-
ցական և կրօնական խորութեան-իր
մեր երկրի բազմաշարքար եղբայրնե-
րուն պահապան հրէշակը- չձգել, չը
թողարկել որ դեռ երկար տեւէ այս
անտանելի և խիստ վտանգաւոր դրու-
թիւնը, ու պարտինք վճարելու և
կարող միջոցներով առաջը առնել :
Պարզապէս արտասահմանեան մատ-
նութեամբ Սասնայ այս անգամուան
անգիմադիր-անօգնական կոտորուած
ամեն գաղտնի ձգտում միւրացուց և
բաւական եղաւ անվիճելիորէն համո-
զել մեզ թէ՛ ինչո՞ւ համար քոյր կու-
սակցութեան համերաշխութեան առա-
ջարկը կը մերժուի, և ինչո՞ւ համար
եղբին բաղձացած միտքիւնը կար-
գիւրել եղեր : Դաշնակցական- միշտ
հիմայ-միտմտութիւն հետեւողներն ալ
պէտք է այլ ևս պահանջ ու համոզ-
ուին որ ասանց միտքիւն չիք վեր-
կուրթին, և բոլորեն թէ՛ վտանգու-
թիւնները և նիւթական նպատակները
հայ դատին վնասակար կերպով կրգոր-
ծած ինչ Ասկէ վերջ լուր աններելի
ոճիւր մը և համբերելը դաւաճանու-
թիւն մէ՛ հայութեան դէմ : Ա՛լ հերքե-
է :

ՅՈՒՆՍՍԱՆԵՐ

ԻՆՉ ԿՈՒՋԵՆ



Յիւլիոյէ յուլիո 1 904

« Իրմիտիկ » ի նախորդ թիւին
մէջ կարգացի Յիւլիոյէի « Հայկազեան
կրթարան » ի ուսուցիչ Պ . Գ . Գալ-
ճեանի մէկ յայտնութիւնը , որով
անձանսթ մը երկուորդ անգամ ըլլալով
սպառնական ու նախատական նամակ
մը կուղարկէ նոյն հաստատութեան
յարգելի անօրէն Պատ . Հայկ Եւր
տրմանի հասցէին :
Պ . Գալճեան թէեւ խղճահարու-
թիւնը կուենայ անուն չը յիշելու
բայց շատ որոշ կերպով կը հասկնէ ,
թէ այս ստոր ու ցած գործին հեղինա-
կը ուրիշ մարդ չէ ու չկրնար ըլլալ :
Եթէ ոչ Յիւլիոյէի միտքերը արակա-
նող ու « Դրօշակեան » անունը կրող
խուճ մը ապուշ ու կուսակցամոլ տի-
րացուներ :

Ու արդէն ասանց անոր ալ մեզ համար
գիտեալ չէր կուսակ թէ՛ այդ տեսակ
գիւղացեան թիւններու կարող են միայն
ու միայն վերոյիշեալ տիւր արարած-
ները :

Ի՞նչ կուզեն սակաւ , ու ի՞նչ է
այս բոլոր պաւերուն ու ստորնութիւն-
ներուն բուն ներքին պատճառը : Ինչ
է պատճառը , որ Զօրեանի հիմնած դպ-
րոցին սկսելէն ի վեր « Եւրօպեան » ի
Պ . թղթակցը — ապահովարար Կ . Պիտ
եան կողմէն ողբալի տղան — ապուշ
ու վտանգաւոր գեր մը առած է իր
տկար ուսերուն վրան ու ամբը ան-
գամ մը անուազն չու գիւր տալիս փախ-
ցնել ինչպէս Ազգ . վարժարանին ու
կրօն Միքայէլեանի հասցէին , նոյն-
պէս ու միեւնոյն ատեն Պատ . Եւր
տրմանի ու իր կրթարանին ուղղի
ձրի ու վարժարանին լուսանկարներու
տարաք մը , որոնք յայտնապէս ցոյց
կուտան այդ տիւր մարդուն մոլի
ու շահախնդրի նկարագիրը :

Այսօր Յիւլիոյէի ազգ . վարժա-
րանիւր տակաւին գոյ կը մնան — և
սակաւ շատ մեծ միտքարութիւն մը
է անշուշտ , ապահովարար , մասնա-
ւոր վարժարանի թղթակցին — Եթէ հարկ
ըլլայ քրքրել , թէ ի՞նչ պարագանե-
րու մէջ գործեց այս տիւր վիճակին
հասած են , վտանգութիւն կրնանք ըսել,
թէ միեւնոյն աղետաւոր խմբակն է որ
մեծագոյն դերը կատարած է ու այ-
սօր ասանց ամենաւոր կողմիւնոր տի-
ցուներ կը թափէ « Եւրօպեան » դպ-
րոցին փակման ստիւնը . . . Իրաւ որ
չուզած բաներն են . . .

Պարզ է սակաւ , չա՞տ պարզ — գոնէ
մեկը համար — թէ ի՞նչ ներքին շար-
ժանութիւն ու ինչ գիւլանիւ հայկեր
ուներն այս մարդիկը սեւցնելու ու
վարկաբեկելու մէջ թէ՛ կրօնը , թէ՛
Եւրօպեանը եւ թէ երկու վարժա-
րաններն ալ — Այնպէս կուսակցական
բախիթ վրէժ է որ կը գտնուի կոր
յաւանորդն ու տնական օրէն :

Այդ դպրոցը , « մասնաւոր » վարժա-
րանը՝ ուր կը պաշտօնավարէ Կ . Պիտ
եան կողմէն տղան , ուրիշ լուսնի հա-
ւատ ինչուաւ չի , եթէ ոչ ու մի-
միայն Դրօշակեան բրգակաւորին հա-
մար : Ու Պիտեան ուրիշ բան չընի
այսօր , եթէ ոչ այս պարտականու-
թիւնը , այն աւրբ պարտականու-
թիւնը , դոր իր վրան դրած է կու-
սակցութիւնը և ուր — ճար չկայ —
հարկադրուած է համակերպիլ բոլոր
ստոր ու այլանդակ արամադրութիւն
ներուն այդ թափքին . . . ճար
չկայ , ո՞ համակերպելու է :

Ու անգամ մը ցածութեան , ասելու-
թեան ու ստորնութեան ցեխերուն մէջ
մարտուած Եւրօպեան թղթակցի և ին
կերթիւնը չի քաջուր և ոչ մէկ
միջոցի առջև : Գնդալ կատարու-
թեամբ կը շարունակէ իր վարժեց ճի-
գեղը վարկաբեկելու համար Եւրօպե-
անը ու կրօնը , որոնք կասկած չի
վերցնի , շատ ու շատ բարձր կը կե-
նան կրկնակ տ' սակեաններով Պիտեա-
նի պէս խեղճուկրակեղէն :
Կը յիշեմ որ , երբ տակաւին Պիտ
եան կը պաշտօնավարէր Ազգ . դպրո-
ցին մէջ — նոյն ատեն տակաւին թա-
ղային չէր . . . — ու ներկայ « մասնա-
ւոր » չէր հիմնուած դեռ , մասնաւոր
դպրոցներու վնասակարութիւնը ցոյց
կը տրուէր « Եւրօպեան » մէջ ու ժող
վուրդը կը հրաւիրուէր միմիայն Ազգ .
դպրոցներուն ուժ պալ :

Հիմակ սակաւ դրութիւնը փոխուած
է : Կեանքի պայմանները — անողոք
պայմաններ — ստիպելին Պիտեանը որ
յանկարճ Դրօշակեան ըլլայ ու միւս

նոյն ժամանակ անօրէն . . . « մաս-
նաւոր » վարժարանին . . .

Ու այդ տղան այն օրէն սկսած ,
նախ դաւեց իր ամենէն մտերիմ ու ազ-
նիւ լարեկամին ետեւէն ու վաճակեց
զայն : Այն բարեկամին որուն երախ-
տագէտ ըլլալու շատ պատճառներ ու-
նէր :

Անկէ յետոյ , միշտեւ այսօր կրկ-
նապատկուած ջանքերով կը ջանացուի
Եւրօպեանի վարժարանին վարկը
կոտրել , որովհետեւ անցողակի ըսեմ ,
« մասնաւոր » վարժարանէն քանի մը
տղաներ սկսած Եւրօպեանի վարժա-
րանը յաճախել ո՛վ գիտէ ինչ պատ-
ճառներով . . . Կամ թկուս գիտե-
վարժութիւնը աւարտած ըլլալուն հա-
մար . . . , Ու ատիկա բնականաբար
չէին կրնար կուտ տալ , ո՞ անշուշտ
չէին կրնար . . .

Իսկ ազգ . վարժարանները , որոնք
օր շանց իր կը « քննադատուին » (. . .)
հարկաւ թղթակցին կողմէն , ատեն
ալ մեղքը ուրիշ լուսնի է . . . եթէ ոչ
հոն պաշտօնավարող ուսուցիչներուն
Դրօշակեան չըլլալը պարզապէս . . . Կրօ-
նին վրայ արձակուած ցեխերը զարմա-
նալի չեն , որովհետեւ թղթակցի և
ինչ . կերեւայ թէ մասնաւոր պատ-
ճառներ ունի վարժարան այդ մարդէն :

Ինչու արեւօք կրօնին գոյութիւնը
կը նեղէ կոր գիւրեք , բաւական հե-
տաքրքրական է այս կէտը : Այնպէս
չէ՞ որ ինչի պատճառ , իսկ գալով այն ,
կէտին , թէ կրօնը ո՞ր աստիճան կա-
րող է իր ուսուցիչ , աւելորդ է նոյն
իսկ ըսել թէ , Պիտեան ու իր եր-
կակ վարժեակները պէտք ունին տա .
կուս և կարող դասատուի մը : Ասի-
կա պէտք է որ ընդունին :

Աւ այժմ այսպիսի բաւական է
երեւին պէտք է վարժարանի ծայր
վերջին , ժողովուրդին ցոյց տալու
համար բուն իսկ պատակաւորները :
Եւրօպեան թղթակցի պէտք է գիտ-
նայ որ հայկերուն ու քննադատներուն
մէջ մեծ տարբերութիւն կայ , թէ լուսնի
է իրեն փողոցային լեզու մը գործա-
ծել իր երկու պաշտօնակիցներուն
դէմ , որոնք իրաւամբ իրեն պատաս-
խանելու անգամ չեն զիջանի կոր :

Թ Ղ Թ Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ն

ԱՄԵՐԻԿԱ 1904 Մայիս 31

Արդէն ինչպիսիք էիք որ Ամերիկայի
հայութիւնը Սարգեան Արեւելիկո-
պոսի նախաձեռնութեամբ կը պատ-
րաստուէր հանդիսաւոր նուէր մը տա-
լու հայաստան օրիորդ Ալիս Սթոն Պը-
լսքուէին իր տասնամեայ հարսնուէր
գործունէութեան առթիւ :

Մայիս 30 ին երկուշաբթի երեկոյ
Պոսթին հոշակաւոր « Երեւոյ » շքեղ
սրահը զարդարուած էր ծաղիկներով
հայկազուն և ամերիկեան դրօշակնե-
րով : Բեմի վրայ նոյն դրօշակներով
ծածկուած էր յարգելի Օրիորդի իւղա-
ներկ պատկերը , պատրաստուած հայոց
կողմէ (300 տարւոր ծախսով) իրեն
նուիրուելու համար , հացկերպով սկը-
սաւ ժամը 7 ին . փառաւորապէս զար-
դարուած սեղանի շուրջ կային աւելի
քան 250 երկսեռ հայեր և ամերիկա-
ցիներ : Սարգեան Սրբազանը երբ
85 տարեկան պատուած Տիկին Ճուլիա
Վորտ Հաւուր թիւը մտած սրահէն
ներս մտաւ և այդ պաշտօնի Պատուը

սեղանի վրայից ստանալու ծափերը կեցեցին և աղաղակով սրահը կը թնայեցունէր։ Սրահը օրհնութեամբ սկսեալ հացկերոյթը, որոյ անեղուն թնայանքը կը նուազէին ընտիր կը տորնէր։ Հացկերոյթին չմանակցող բաւական թւով հասարակականը եկած էին թէ հայ եւ թէ ամերիկացի, որով սրահը լեցուած էր խոտն բազմութեամբ մը։ Եւր հացկերոյթը վերջացաւ։ Սրահը անմիջապէս կարգացաւ։ Հայ Ազգիկն զրուած օրիորդ յանունը ուղղեալ երախտագիտական ուղղութեամբ հայերէն լեզուաւ։ Սոյն ուղղութեամբ անդրէին թաղային խորհրդակցութեանը կարգացաւ Պատմութեան հայոց նորեկ ատմական հոգիւ Տէր Թորոս քահանայ Ջուղայեցի։ Երկու հինգական տարեկան փոքրիկ հայ օրիորդներ բնակ վրայ կեցած էին պատկերի երկու քովը, եւր ուղղութեամբ մէջ կար դադարեցաւ թէ «Հայ Ազգիկը իշտան երախտագիտութեան կը նուիրէ այդ ներթափանց ջրին» բայց բարձրագուստ անգին նուիրէ» երկու փոքրիկներն անմիջապէս բայց պատկերը վրայի դրոշմերը մէկտեղ քաշելով, ի տես պատկերին սրահը զղրացաւ ծափերու եւ կեցցէն երու աղաղակներու մէջ։ Ուղղութեամբ ընթացողն յետոյ, որքէր եւաւ Սրիորդ Պաքուէլը եւ յուզեալ շէտ անբով անտեսութեան, իր սովորական համեմատութեամբ յայտարարելով թէ՝ ոչինչ ըրած է հայ ազգին որոյ փոխարէն արժանացած ըլլալ ասանկ երախտագիտութեան։ Իր խօսքը վերջացուց մաղթելով որ քիչ յետոյ կարող ըլլանք ասանկ հանդէս մը տարբեր Արաւրատ լեռան ստորոտը իրեն ներկայութեամբը։

Խիստ յուզել էր ասանկ 85 ամեայ ծերունի Տիկին Ճուղայեցի հաւուր որ որքէր եւաւ եւ մօտ 20 վայրկեան ասանկութեան, իր խօսքերու մէջ կեանք եւ հաւատք կար, չնայելով որ Սարաճեանի օգնութեամբ հաղել կրցար էր հասնիլ սեղանի գլուխը, երկու կեանք մաղթեց օրիորդ Պաքուէլին որ գործէ ի նպատակ հայ դատին՝ ըսելով թէ՝ «Իր յուսահատութիւնը անշուշտ պիտի յաղթէ»։ Սոյն կարգով խօսեցան Տիկին Վորոս, Տիկին Պարօզ,

Տիկին Վէյսըն։ Այս կիները իրենց կեանքը անցուցած են զերի աղքատ աղատութեանը աշխատելու գործին մէջ։ Կորովի դեր կատարած են ամերիկայի գիւղերի աղատութեան գործին մէջ։ Գաւ յայտնեցին որ հայկական դատին օգնելու իրենց բուն ցանկութեամբ անմիջապէս են դերակատարին բայց ըսին վստահ եւք որ հայոց միայն գործունէութեան պիտի միանայ նաեւ Օրիորդ Պաքուէլի նմանները։ Չնայելով որ հայը պիտի գտնէ իր աղատութեանը։ Եթէ մեր շատ մը եւրոպացիները եւ հարուստ ջոշերը այս պատաններու կէսին չափ հաւատք եւ զօնողութեան ոգի ունենային Հայ աստանը շատոնցապաւած կըլլար։ Խօսեցան նաեւ Օրիորդ Պաքուէլի ծերունի հայրը Պ. Հէնրի Պաքուէլը։ Նշանաւոր աղատական Պ. Կէսթրիսըն, եւ բրօքսթըն Վորոս։ Աստիք բոլորն ալ ծախսեցան մասնաւորապէս հայոց միայն միանալու գործունէութեան վրայ։ Գործ ըսին «Եւր միայն եւ մէկ անձի պէս գործէք ձեր դատի համար իրաւունք ունիք քաղաքակրթ աղքատներու եւ կառավարութեաններու օժիւրն բնեւելու եւ ձեր արդար իրաւունքը պահպանելու»։ Թէ Տիկիններու եւ թէ այս վերջին ամերիկացի խօսողներու ատենադրութեանը ողջունեցան զղրացին ծախսեալ ութնամբ։

Հանդէսին մասնաւոր փայլ մը տուին օրիորդ Ազնիւ Բարակեանի հայերէն «Մայր Արաքսին» եւ իտալիէնէն երգ մը, Պատանի Նորսիկեանի երգը, եւ պատանի Էքսէրճեանի ջութակը։

Հայոց կողմէ ատենախօսութեանը ընդին անդրէին լեզուա Պ. Սիւնիս Պ. Պ. Կիւլէզեան, Պատ. Պաղտատարեան, Մայթոց վարդապետ, Պ. Նահիկեան, Հնչակեան մասնաձեռնողներու։ Եւ «Ձայն Հայրենեացի» խմբագրութեան կողմէ գրաւոր ուղղութեամբ կարգաւ Պ. Արաւրատը Գէորգեան, շնորհաւորական հեռագիր մը եկած էր նաեւ Դաշնակցական ամերիկայի կեդր. կոմիտէի կողմէ։

Այս հանդէսը երախտագիտական պարտք մը կատարած ըլլալուն հետ հայ դատին համակրողներու թիւը

աւելնալու եւ օտարներու մեր դատին աւելի մօտէն ծանօթանալու գործին ծածկեց։

ԱՐՄԷՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՍԵՆՈՐ ՈՐԲԱՆԱՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեան է. բոլոր Ընդհ. Ժողովը պիտի գումարուի Յատարակալ կիւրակէ 13 Յունիս կէս օրէն վերջ ճիշդ ժամը 2 ին աղգ. Վարժարանի սրահին մէջ։

ՕՐԱՆՍՊՈՒ

Ա. համարատուութեան Գործ. Ժողովը։

Բ. Գործ. Ժողովը Ընտրութեան Կր խնդրի ընկերութեան Պատ. անդամներէն որ ներկայ իր հրահրագիր ընդունելով հաճին որոշեալ ժամէն ներկայ գտնուի։

ԻՆՏԱՐ ՅԱՐԳԱՆՈՐ

Ի զիմաց ընդ. Ժողովը պիտի ատենադարձ ասանկապետ Ա. Փաշաքեան Կ. Գէորգեան

ՏԻՐՈՒՆԻ

Պուրկազի Միութեանակալ յանձնախումբս իր չնորհալուութիւնը կը յայտնէ ամէն ունեց որոնք մեր սիրեցող ընկեր Տ. ՅԱՆՆԱՆԷՍ ՄԱՄԻԿԵԱՆԻ յուղարկուորութեան ներկայ գտնուելով. ցաւակցեցան մեզ յարգանք մեր այդ անձնուէր ընկերին. որ 24 ամեայ ծագիկ հասակին կից իր մահանացուն, Մայիս 25 ին։ Հանդուցեալ Տիկինի Խըրաւու գիւղէն հացագործ Նանի եղբայրն էր որուն ծանօթ քաղաքործութիւնը այնչափ գնահատուած է ժամանակին Սուրբաս շքանաւայի վրայ կատարած սպանութեան փորձով։

Մաղթելով հանգիստ իր օսկերց եւ միութեանը իւր սգակիր գերդաստանին

Մնամք վշտակիր ի զիմաց բոլոր Միութեանակալ ընկերներու

Պուրկազի Յանձնախումբ

ԱԶԳԱՅԻՆ

ԷՋՄԻԱՐՆԱՅ ՍԻՆՈՐ ՀԱՐԳԱՄԻ մը պատասխանելով յայտարարեք է թէ վեցերորդ աստիճանի աղգակցական պատկեր կը համարուի անթոյլաւորելի բայց պատկի խորհուրդը կատարուելէ յետոյ անվաւեր չը ճանչցուի։ ալ միայն պատկող քահանան պատասխանատու համարուելով ապաշխարութեան կենթարկուի մէկ ու կէս տարի պալմանաժամով։

—Նոյնպէս Սինօր ուրիշ հարցումի մը պատասխանած է թէ հռոմէական կամ բողոքական պըտակով ամուսնացող մերձաւոր աղգականներու զաւակները կըրնան հայ եկեղեցու մէջ մկրտել. քանի որ կաթողիկէ բողոքական եկեղեցիներու պատկառութիւնը մեր եկեղեցին վաւերական կը համարի։

—Տ. Բարթողիմէոս Վ. Պաղճեան որ Պուրկառայէ Պօլիս վերադառնալով Աղգ. Հիւանդանոցի մէջ իբր ծեր եւ հիւանդ կը խնամուէր վախճանածէ 70 ամեայ հասակին մէջ։ Հանգուցեալը իր բարք ու վարքով անբասիր եկեղեցական մըն էր բայց թոյլ բնասրտութեամբ վարած պաշտօններուն մէջ այնչափ օգտակար չէ եղած։

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ վրայ նուաբ փաշայի պրօնդեայ արձանը կանգնուած եւ բացումը կատարուած է անցեալ շաբթու շատ շքեղ կերպով։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ գործերուն քննիչ կարգուող Տ. Գէորգ Արաւանեան

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Սրատագրուած «Բանասէր» Հանդէս)

(Շար. նախորդ թիւին)

Եւ ահա երբ 1827 թուին Ռուսաց յառաջապահ զօրքը Բենկինգօրֆի հրամանատարութեան ներքոյ ստգ զրեց Երեւանի խանութիւնը, նոցա մէջ էր եւ Ներսէսը։

Գրեալնէն աղատութեան համար եկած զօրքի մէջ Ներսիսի ներկայութիւնը քաջալերում էր Հայոց ազգաբնակչութիւնը։

Պատերազմի ամբողջ շարունակութեան ժամանակ Ներսէս Էջմիածնում նստած, որտաւորի հետեւում էր պատերազմական ընթացքին։ Նա ակնաւատեալ էր Արաւո Միջոյի արշաւանքներին որ մեծ վտանգ էր սպառնում Էջմիածնին։ Երկրայ էր Աշտարակի կոուսումը, տեսաւ Թաւրիզի եւ Երեւանի անկումը եւ խաղաղութեան դաշնագրութիւնը։

Այն րոպէին, երբ նա աներկբայ կատարուած էր համարում իւր հայրենիքի աղատութեան գործը, նա պարտք համարեց կատարել իր հօր կտակը։ Աշտարակ անշուք գիւղից կէս ասպարիզաչափ հեռու գտնուում էր Շահապիւեան կամարականների ստանձնացած սեպհական գերեզմանատունը (*)։

այդ տեղ բերեց Ներսէսը գինեւալ կրատվսկուն եւ ծնկաչոք արտասուքն աչքերին խոնարհեցաւ հօր գերեզմանի առաջ, որին երկար տարինք չէր փոխանաւում մօտենալ։

Երբ Ռուսաց զօրքն թաւրէզն առաւ, ամիջապէս Ազիբէյջանի շէրի կողմից պատգամաւորութիւններ յաճախեցին Պատկեւի ժօտ եւ խնդրեցին զաղթեցնել իրենց Ռուսաց սահմանը։

Ռուսաց կառավարութեան ցանկութիւն էլ այս էր. առաջարկութիւնը բոլորովին համաձայն էր իւր հայեցակէտին։ Գլխաւոր հրամանատարը քաջալերեց, փայտայեց նոցա եւ արձակեց գնալ ու զաղթելու պատրաստութիւն տեսնել։ Սակայն անապոյտի ձմեռը եւ գուցէ այն յոյսը, թէ Ազիբէյջանն էլ կը մնայ Ռուսաց ձեռքի տակ, արգելք եղան քրիստոնեաներին հեռաւոր ճանապարհորդութեան պատրաստուելուն։ Ինչպէս մարտ ամիսը։ Այնուհետեւ մի քանի արդիւքներ եւս յառաջ եկան. մի կողմից Հայիւր զղջացին իւրեանց ստեղծ խոստումից, միւր կողմից Պարսիկներն ըսկեցին համոզել նորանց հետ մնալ եւ այլն։ Իսկ Ռուսաց կառավարութիւնը վճռեց ամենատեսակ միջոցներ գործ գնել Հայերի բարոյական ոգեւորութիւնը վաւ եւ զօրացած պահպանելու։

Այս նպատակի համար Ներսէսն ու զարկեց Պարսից գաւառները Ստեփաննոս Արքեպիսկոպոսին եւ Երկօղայոս վարդապետին, իսկ Պատկեւից կողմից Պետրուրդից գրգայեալ կազմակերպին յանձնեց նորան գնալ եւ զաղթականութեան գործը յառաջ տանել եւ զեկաւարել։

Դիպապետ Լազարեանն այն նշանաւոր տոհմի զաւակն էր, որոնք յայտնի են Մոսկուայում աւրուելան լեզուաց ճեմարանի հիմնադրութեամբ եւ որոնք ի վաղուց անտի բնակուելով Ռուսաստանում կատուցել են մայրաքաղաքների հայ եկեղեցիքը եւ շարունակ անխնայ օգնութիւն են հասցրել իւրեանց հայրենակիցներին։

Այս տան հարստութեան պատմութիւնը ամուր կապուած է Ռուսաց կայսերական թագը զարդարող մի թանկագին գոհարի հետ։ Այդ արքամանդը, որ Շահ-Նադիրին էր պատկանում, բերել է Լազարեան տոհմի անդամներին մէկը։

Պարսկական լծից բուն Հայաստանի աղատութիւնը չէր կարող արձադանք չը տալ եւ պարսից աշխարհում բնակուած Հայերի սրտերում, չէր կարող չը զարթնացնել նոցա մէջ հայրենասիրական զգացմունք եւ աղատութեան ձգտումն։ Այդպէս էլ եղաւ։

Շահի սպանուելուց յետոյ՝ այդ թանկագին քաղը ձեռքէ ձեռք անցնելով ընկաւ վերջը Պետրուրդ քանակող Շաքրազ անունով մի Հայի ձեռք։ Լազարեանը յանձն կառնու ալ գոհարը կոմ Օրլովի համար գնել տալու։ Գոհարը գնուեցաւ 400000 մանէթի։

(*) Ներսիսի հայրը թաղուած է ոչ Շահազիգեանների գերեզմանատու. այլ հասարակաց։

Ծանօթ. թարգմանիչ

(Շարունակելի)

